

Մանուկներու Սուրբ Գիրքը  
կը ներկայացնէ



Դաւիթ  
թագաւորը  
(մաս 1)



Written by: Edward Hughes

Illustrated by: Lazarus; Alastair Paterson

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation  
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

[www.M1914.org](http://www.M1914.org)

©2021 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,  
as long as you do not sell it.



Երիտասարդ Դաւիթ կը փախչէր: Սաուլ  
թագաւոր կ'ուզէր զինք սպաննել: Դաւիթ ապրեցաւ  
անտառներուն մէջ, հսկայ քարայրի մը մէջ իր հետ  
չորս հարիւր հետեւորդ:



Երբեմները, Սաուլ թագաւորի զինուորները  
կրնային իրենց գտնել: Բայց Դաւիթ միշտ տեղը կը  
փոխէր:



Սառլի ծառան Տօէկը թագաւորին ըսաւ, որ  
քահանաները օգնեցին Դաւիթը, որ փախչի, Սառլ  
հրամայեց բոլորը մեռցնել: Միայն Տօէկ կ'ուզէր  
քահանաները իրենց ընտանիքներով սուրբ անցնել  
եւ սպաննել: Շատ գէշ արարք էր:






Օր մը, Սառլ  
Դաւիթի ետեւէն  
քարայր գնաց,  
ուր Դաւիթ եւ իր  
մարդիկը կը  
պահուտէին:  
Սառլ առանձին  
էր:




Քարայրին մէջ,  
Դաւիթ շատ  
դիւրութեամբ  
կրնար Սաուլը  
մեռցնել:



Փոխարէնը ան Սաուլի քով  
գնաց առանց ձայնի եւ անոր  
վերարկուէն կտոր մը կտրեց իր  
դաշոյնով: Երբ Սաուլ մեկնեցաւ  
Դաւիթ իրեն կանչեց:



"Ես քու վերարկուհի  
անկիւնէն կտոր մը  
կտրեցի եւ քեզի  
չմեռցուցի,



գիտցիր եւ տես, որ ես իմ  
ձեռքս ոչ գէշուրթիւն եւ ոչ ալ  
ըմբոստուրթիւն կայ...":





Սառւ ըսաւ, որ ան ցաւ կը յայտնէ իր ըրածին  
համար, որ Դաւիթին վնաս պիտի հասցնէ: Բայց  
շուտով, իր հին բարկութիւնը նորէն եկաւ եւ երեք  
հազարնոց մարդոց բանակ մը հաւաքեց մեռցնելու  
համար Դաւիթը: Գիշեր մը երբ բանակը կը  
քնանար, առանց ձայնի սողացին թագաւորին  
վրանը, ուր Սառւ կը քնանար:





"Աստուած քու  
բանակդ քու ձեռքդ  
տուլաւ այս գիշեր",  
փսփսաց Ապիշայ:  
"Յաճիս ձգէ, որ  
սպաննեմ զինք իմ  
նիզակովս, մինչեւ  
գետին: Ես առիթ  
պիտի չունենամ  
երկրորդ անգամ  
զարնել":





Դաւիթ մերժեց: Սաուլի  
նիզակը կուժը կտրեց, ան  
վրանէն հեռացաւ: Մօտակայ բլուրի  
մը վրայէն Դաւիթ պռռաց մինչեւ որ  
Սաուլ լսէ իրեն: Նորէն Սաուլ տեսաւ, որ  
Դաւիթ կրնար զինք սպաննել, սակայն  
չսպաննեց: Անգամ մը եւս ան զղջաց, որ  
կը փորձէ վնաս հասցնել Դաւիթին:  
Սակայն Դաւիթ գիտեր, որ չէր կրնար  
վստահիլ Սաուլի խօսքին:






Այդ ատենները Սամուէլ  
մեռաւ: Ան էր այն մարգարէն,  
որուն Աստուած ըսած էր, որ  
օժէ Սաուլը, ետքը Դաւիթը իբր  
Իսրայէլի թագաւոր: Երբ  
պաղեստինցիները  
յարձակեցան Իսրայէլի վրայ:  
Սաուլ մեծ սխալ մը գործեց,  
որ Աստուած արգիլած էր:



Ան կնկայ մը հրամայեց, որ կանչէ Սամուէլը  
մեռելներէն: Այդ գիշեր, Սաուլ առաւ լուրը:



"... Տէրը քեզմէ հեռացաւ եւ  
քու թշնամիդ դարձաւ: Տէրը քու  
թագաւորութիւնդ բզկտեց եւ քու  
դրացիիդ տուաւ, Դաւիթին: Վաղը  
դուն եւ քու տղաքդ հետս պիտի ըլլաք:  
Տէրը Իսրայէլի բանակը պիտի ձգէ  
պաղեստինացիներու ձեռքը", երբ Սաուլ  
լսեց ասիկա գետին ինկաւ վախով:




Պաղեստինցիները յարձակեցան  
Իսրայելի վրայ եւ Իսրայելի մարդիկը  
փախան: Պաղեստինցիները  
սպաննեցին  
Սաուլի տղաքը  
մեջերնին ըլլալով  
ճոնադանը  
Դաւիթի լաւ  
բարեկամը:



Սառւլ նիզակներով  
ծանր վիրաւոր էր: Ան  
ըսաւ. "Դուրս հանէ սուրդ  
եւ խրէ ինծի, մի՛ ձգեր,  
որ այս գիշեր մարդիկը  
քան եւ ինծի մեռցնեն եւ  
չարագործեն": Բայց իր  
զրահ կրողը այդպէս  
չըրաւ, ան շատ կը  
վախնար:







Սառլի եւ իր որդիներուն  
մարմինները գտնելով  
պաղեստինցիները անոնց  
մարմինները կապեցին  
գրաւեալ իսրայելական  
քաղաքի մը պատերուն:  
Քանի մը քաջ իսրայելացիք  
ազատեցին դիակները,  
տուն տարին եւ այրեցին  
զանոնք, նախքան  
անոնց փոշիները  
իսրայելի մէջ  
թաղեն:





Երբ Դաւիթ լսեց  
այս սոսկալի լուրը,  
տիրեցաւ եւ լացաւ  
եւ ծոմ պահեց մինչեւ  
երեկոյ Սաուլի համար,  
իր տղուն Ճոնաթանին  
համար եւ Տիրոջ  
ժողովուրդին համար,  
որովհետեւ անոնք  
սուրով ինկան:



Թեև Սաուլ փորձած է Դաւիթը սպանել, Դաւիթ պատուեց Սաուլը Աստուծոյ ընտրեալը, մինչեւ վերջ: Հիմա Աստուած պատուեց Դաւիթը, զինք թագաւոր դարձնելով Սաուլի տեղ:



# Դաւիթ թագաւորը (մաս 1)

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

1 Սամուէլ 24 - 31, 2 Սամուէլ 1 - 2

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

